Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վեդի քաղաքի Խաչիկ Սողոմոնյանի անվան հ. 2 հիմնական դպրոց

Թեմա՝ Բառապաշարի հարստացումն ու բառուսուցումը հայոց լեզվի և գրականության դասերին

Վերապատրաստող, մենթոր՝ Հասմիկ Չարխչյան

Ուսուցիչ՝ Թագուհի Ղազարյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն----------էջ 3

Հետազոտության նպատակները----------էջ 4

Հետազոտության խնդիրները----------էջ 4

Մեթոդաբանություն----------էջ 5

Բառապաշարի հարստացման հիմնական ձևերն ու միջոցները----------էջ 6

Բառապաշարի հարստացումն ու բառուսուցումը բառագիտությունն ուսումնասիրելու ժամանակ----------էջ 9

Ինչպես հարստացնել բառապաշարը գեղարվեստական երկի ուսուցման ժամանակ----------էջ 13

Բառապաշարի հարստացումը գրավոր խոսքի ուսուցման միջոցով----------էջ 15

Եզրակացություն----------էջ 21

Գրականության ցանկ----------էջ 22

Ներածություն

Լեզուն հաղորդակցվելու, մտքեր փոխանակելու միջոց է: Հայտնի է, որ մտքեր կարելի է փոխանակել ոչ միայն հաղորդակցական միջոցներով, այլ նաև դիմախաղերի, ձեռքերի, ոտքերի շարժումների միջոցով, ինչպես նաև մնջախաղերի թատրոններում, պարարվեստի ոլորտում: Լեզուն ուրիշ օգնականներ էլ ունի՝ գունավոր լույսեր, պատկերներ, նկարներ, բազմագույն դրոշակներ:

Սակայն մարդը իր մտածածն ու զգացածը առավել հեշտ ու պատկերավորը արտահայտում է լեզվի միջոցով: Բնության հրաշալի պարգևն է լեզուն, որ կենդանի արարածներից միայն մարդուն է տրված: Վաղնջական ժամանակներից դառնալով մարդու ուղեկից՝ լեզուն հիմնական հաղորդակցության միջոց է մնում նաև մեր օրերում՝ համացանցի, ռոբոտների, ատոմի տիեզերական դարում: Եվ որքան օգտագործվում է լեզուն, ոչ թե հնանում է, այլ ավելի է կատարելագործվում, հղկվում, զարգանում ու հարստանում:

Անփոխարինելի է մայրենի լեզվի դերը ոչ միայն հաղորդակցման առումով, այլև նախնիների կուտակած կենսափորձին, գիտելիքներին, մշակույթի նմուշներին ծանոթանալու և դրանք սովորելու նպատակով: Մայրենի լեզվի իմացությունը անհրաժեշտ նախապայման է նաև օտար լեզուների լավ յուրացման համար, ինչպես նաև մյուս բոլոր առարկաները սովորելու միջոց է, հիմք: Մայրենի լեզուն բանալի է, որով բացվում են մյուս գիտությունների դռները: Պատահական չէ, որ մայրենիի ուսուցումը սկսվում է 1-ին դասարանից և շարունակվում երկար տարիներ:

Հետազոտության նպատակները

Յուրաքանչյուրի սրբազան պարտքն է սովորել և պահպանել մայրենի լեզուն: Մեծ է մայրենի լեզվի ուսուցչի դերը այդ գործում: Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել այն ուղիները, որոնք կօգնեն աշակերտներին ճիշտ և հայեցի արտահայտելու իրենց մտածածն ու զգացածը, պատկերավոր դարձնելու խոսքը, հարստացնելու բառապաշարը: Յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է պրպտել, փնտրել, ստեղծագործել, գտնել ուսուցման և դաստիարակության նորանոր ձևեր, մեթոդներ, սահմանել ճիշտ ռազմավարություն այս կամ այն դասանյութը ուսումնասիրելիս, կանխատեսել զարգացման ուղղություններ, նախանշել հետագա անելիքները:

Մայրենին սոսկ դպրոցական առարկաներից մեկը չէ, այլ մարդկային բարձրագույն արժեքներ՝ հայրենասիրություն, ազգային արժանապատվություն, հպարտություն դաստիարակելու միջոց: Հայոց լեզվի և գրականության դասերը նպաստում են լեզվական գրագիտության և կարողունակության զարգացմանը: Մայրենիով զարգանում են նաև կրթության մյուս կարողունակությունները՝ (Տես՛ հղումը)

. սովորել սովորելու կարողունակություն

. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

. մշակութային կարողունակություն

Մեծ նշանակություն տալով սովորողների բառապաշարի հարստացման ու բառուսուցման կարևոր գործին՝ հետևողական և համբերատար աշխատանք պետք է կատարել՝ սկսած դպրոցական կյանքի առաջին դասարանից, որն էլ կնպաստի երեխաների խոսքի և մտածողության զարգացմանը, գրագետ խոսք կառուցելուն, անկաշկանդ և ազատ խոսելուն:

Հետազոտության խնդիրները

Մայրենին սիրելու և կարևորությունը գնահատելու համար ամենից առաջ պետք է լավ ճանաչել, լավ իմանալ այն, թափանցել նրա գաղտնիքների խորքերը:

Իհարկե, մեր աշակերտները դասարանից դասարան քայլ առ քայլ ուսումնասիրում են մայրենի լեզուն, նրա ծագումը, պատմությունը, հնչյունները, բառերը, քերականական երևույթները, բայց անառարկելի փաստ է, որ երկար տարիներ դպրոցում հայոց լեզու և գրականություն սովորող աշակերտների մի մասը հաճախ չի կարողանում գրագետ, կիրթ, գրական հայերենով գրավոր և բանավոր մտքեր շարադրել: Որոշ սովորողներ էլ մայրենիի նկատմամբ հետաքրքրություն չեն ցուցաբերում, քանի որ նրանց թվում է, թե այն սոսկ քերականական չոր ու ցամաք կանոնների ամբողջություն է: Բայց եթե ուսուցիչը հետաքրքիր փաստերով, կենդանի զրույցներով, զվարճալի խաղերով ու արդիական մեթոդներով անցկացնի դասը, սովորողների մեջ սեր ու հետաքրքրասիրություն կառաջացնի առարկայի հանդեպ:

Մայրենիի դասերի հիմնախնդիրներից է աշակերտների բառապաշարի հարստացումը: Լեզվին լավ տիրապետելու գործոններից մեկը բառապաշարի յուրացումն է. որքան հարուստ է սովորողի բառապաշարը, այնքան մեծ է երաշխիքը նրա համակողմանի զարգացման:

Մասնավորապես դպրոցում մայրենիի ուսուցումը հետապնդում է այդ նպատակը՝ սովորողներին ճիշտ և գեղեցիկ խոսք սովորեցնել:

Հիրավի, մի՞թե պետք են այն կանոններն ու սահմանումները, քերականական գիտելիքները, եթե դրանք գործնական կիրառություն չունեն խոսքում:

Բառապաշարի հարստացմանը, բառուսուցմանը, լեզվական ճաշակի ձևավորմանը ուսուցիչը պետք է հետամուտ լինի թե՛ հայոց լեզվի, թե՛ գրականության դասերին: Ամեն մի նյութ հաղորդելիս նա պետք է ծրագրի նպատակին ուղղված իր անելիքները, հանգամանորեն նախապատրաստվի, բացահայտի ուսուցման բազմազան հնարներ ու եղանակներ, մշակի իմացած մեթոդներն ու կիրառի նորովի:

Խնդրի լուծման բանալին լեզվի գործնական ուսուցումն է: Դա նշանակում է, որ լեզվի և գրականության դասերը այնպես պետք է կազմակերպել, որ աշակերտը կարողանա գործնականում կիրառել գիտելիքները, խոսել գրագետ, չխախտել սովորած քերականական կանոնները, օգտագործել ընթերցանության դասերին սովորած նոր բառերը:

Մեթոդաբանություն

Այս հետազոտության իրականացման համար կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը՝ 1. դիտարկում՝ դժվարությունները, որ առաջանում են բառուսուցման ժամանակ:
2. Կարիքի գնահատում՝ որպես այս հետազոտության հիմք, որով սովորողները մեջբերել են տարբեր առարկաների ուսումնասիրության ընթացքում հանդիպած տերմիններ, հատուկ անուններ և այլն:

Բառապաշարի հարստացման հիմնական ձևերն ու միջոցները

Հայոց լեզուն աշխարհի հնագույն լեզուներից է: Որպես հաղորդակցման կարևորագույն միջոց՝ այն մեր ժողովրդի ամենանվիրական ժառանգությունն է: Նրանում է արտացոլված հայ մարդու դարավոր պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Հայերենը՝ որպես ազգային լեզու, ամփոփում է հայ ժողովրդի լեզվական միջոցների ամբողջությունը՝ ժամանակակից հայոց գրական լեզվի երկու տարբերակները՝ արևելահայերենն ու արևմտահայերենը, հայերեն տասնյակ բարբառներն ու խոսվածքները:

Հայ ազգային լեզվի բարձրագույն ձևը հայոց գրական լեզուն է, որի ուսուցումը սկսվում է առաջին դասարանից, քանի որ հայոց լեզուն է մյուս բոլոր առարկաները սովորելու ճանապարհը և միջոցը:

Հայոց լեզվի բառային կազմը, անցած լինելով իր զարգացման տարբեր փուլերը, բազմադարյան գիր ու գրականության հիման վրա աննախընթաց զարգացում է ապրել, հարստացել ժամանակի ընթացքում:

Հարուստ է հայերենի բառապաշարը, այն ունի զարգացման լայն հնավորություններ: Մտնելով հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ՝ այն ունի հնդեվրոպական բազում արմատներ:

Հայերենի բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրը բառակազմական միջոցներն են՝ ածանցում, բառաբարդում, հապավում, բաղադրյալ անունների ստեղծում և այլն:

Բառապաշարի հարստացման մյուս միջոցը փոխառություններն են, որ կատարվել են պատմական այս կամ այն ժամանակաշրջանում և շարունակվում

են նաև մեր օրերում՝ համակարգչային տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում: Փոխառություններ են արվել տարբեր լեզուներից՝ պարսկերենից, ասորերենից, հունարենից, արաբերենից, թուրքերենից, ռուսերենից, անգլերենից և այլն: Ահա թե ինչու դյուրին չէ սովորողի համար հայերենի բառապաշարի ուսուցման և հարստացման գործընթացը: Հարկավոր է կատարել հետևողական և լուրջ աշխատանք ոչ միայն մայրենիի, այլև մյուս առարկաների դասերի ժամանակ: Յուրաքանչյուր ուսուցիչ, անկախ իր դասավանդած առարկայից, դասավանդման ընթացքում պետք է մեծ ուշադրություն դարձնի նոր բառերի, տերինների, գրությամբ և իմաստով դժվարություն ներկայացնող հասկացությունների վրա: Դա մեծապես կնպաստի առարկաների յուրացմանը, միջառարկայական կապի ստեղծմանը:

Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում ուսուցիչը բազմիցս հանդիպում է բնագիտական, մաթեմատիկական առարկաներին վերաբերող բառերի, որոնց գրությունը կամ իմաստը հայտնի չէ աշակերտներին: Եվ եթե տարիների ընթացքում հիշյալ առարկաների ուսուցիչները անդրադառնան նմանօրինակ բառերի բացատրմանը, ապա օգնած կլինեն ոչ միայն մայրենի լեզվի ուսուցիչներին, այլև կնպաստեն երեխաների ընդհանուր զարգացմանը, մտահորիզոնի ընդարձակմանը:

Օրինակ՝աշխարհագրության դասագրքերում կան բազմաթիվ բառեր, բաղադրյալ հատուկ անուններ, որոնց իմաստն ու ուղղագրությունը տեղին է հենց այդ դասերին սովորելը: Ինչպես՝ *օդային տարածք, Հարավային Սուդան, Մեծ Բրիտանիա, Արևմտյան Եվրոպա, Բրազիլիա, Կորեայի Հանրապետություն, ԱՄՆ, Հյուսիսային Ամերիկա, Շվեյցարիա, մոնղոլոիդ ռասա և այլն:* Որքան կհեշտացնի այս և նման այլ աշխարհագրական անունների և տերմինների ընկալման գործը աշխարհագրության ուսուցիչը:

Կենսաբանության դասին հանդիպած դժվար բառերն էլ քիչ չեն, որոնց պետք է տեղին և ժամանակին անդրադառնալ: Դրանցից են՝ *մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ, հյուսվածք, բակտերիա, օրգանոիդներ, թաղանթանյութ, բարձրակարգ բույսեր, սերմնավոր բույսեր, փոշեմուտք, սերկևիլ, բամբակ, նախակենդանիներ, արյունատար համակարգ, նյարդային, թարթիչավոր որդեր, ոստրե, ականջմտուկներ, լյարդ, երիզորդ, անձրևորդ, ճանճեր, թևավորներ, թրթուրներ, փափկամարմիններ և այլն:*

Նույնը կարելի է ասել պատմության դասերի մասին. կարևոր և հաճախ հանդիպող բառերն ու արտահայտությունները պետք է բացատրվեն, գրվեն գրատախտակին: Ինչպես՝ *քաղաքացիական օրենսգիրք, ֆրանկ,*

ագարակատեր, բորսա, բուրժուա, շոգենավ, մանուֆակտուրա, գաղութացում, վերապրուկ, մետրոպոլիտեն, մենատիրություն, մենաշնորհ, կուսակցական, հանրապետական, հետադիմություն, արհմիություն, գործադուլ, Կարմիր սուլթան, մարքսիստ, պլանտացիա, գնդակոծում և այլն:

Մաթեմատիկայի դասին հանդիպող շատ բառեր նույնպես պետք է հանգամանորեն բացատրվեն՝ ուշադրություն դարձնելով դրանց կազմությանն ու ուղղագրությանը: Օրինակ՝ *վերջավոր բազմություն,թվային բազմություններ, միավորման տարրերի քանակ, ռացիոնալ, իռացիոնալ,ուղիղ և հակադարձ համեմատականություններ,ֆունկցիայի սահմանում, կոորդինատային հարթություն, աբսցիսների առանցք, օրդինատորների առանցք, սյունակային դիագրամներ և գրաֆիկներ, համեմատականության գործակից, անկյունային գործակից, գծային ֆունկցիա և այլն:*

Համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց ստեղծվում են նորանոր բառեր, արտահայտություններ, հասկացություններ, որոնց տիրապետելը այսօրվա հրամայականն է: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում ոչ միայն նպաստում է սովորողների՝ մեդիադաշտի օգնությամբ գիտելիքների հարստացմանը, այլ նաև բառապաշարը այդ ոլորտին բնորոշ բառերով ու տերմիններով հարստացնելուն, սովորողների մոտիվացիան բարձրացնելուն: Այդ բառերին աշակերտները ծանոթանում են ինֆորմատիկայի դասերին, ինչպես՝ *համացանց, կիլոբայթ, հիպերտեքստային փաստաթղթեր, սերվերներ, բրաուզեր, դոմենային համակարգ, տիտղոսային էջ, կայք, սլայդ, մակետներ, տառատեսակներ, անիմացիա, էֆեկտ, բջիջների բլոկ, կոդ, բիթ, ինֆորմացիա, օբյեկտ, ենթատեքստային մենյու, ֆայլ, թղթապանակ, քարտադարան և այլն:*

Միջառարկայական կապի հետևողական կիրառման և ապահովման շնորհիվ սովորողները կհասնեն որոշակի արդյունքի, կզարգանա նրանց վերլուծական միտքը, և կխոսեն սահուն ու անկաշկանդ:

Մայրենիի դասերին ուսուցիչը հաճախ պետք է հիշեցնի, որ մեր լեզուն իր բառային կազմով հարուստ է, ճկուն, պատկերավոր, ունի հարստանալու բազմազան միջոցներ:

Ե'վ ուղղագրական վարժություններ կատարելիս, և՝ բառակազմական կամ քերականական վերլուծությունների ժամանակ, աշակերտներին հիշեցնում ենք, որ բառի բաղադրիչ մասերի իմացությունը խիստ անհրաժեշտ է բառիմաստն իմանալու համար:

Նույն արմատից կարելի է բազմաթիվ նոր բառեր կազմել, բայց կարևորը այդ արմատը ճանաչելն է, ճիշտ գրելը: <<Օր>> բառը ճանաչելով՝ սովորողները ճիշտ կգրեն նաև *օրեցօր, այսօր, կեսօր, ամենօրյա, նախօրոք, վաղօրոք և այլ բառեր:*

Այս սկզբունքով պետք է սովորեցնել հայերենի բառերի մեծագույն մասը: Ճանաչելով բառի արմատը և իմանալով դրա գրության ճիշտ ձևը՝ աշակերտները չեն սխալվի նույնարմատ բառերի գրության ժամանակ: Այս աշխատանքը պետք է շարունակական լինի ոչ միայն ուղղագրություն սովորեցնելիս, այլև հայոց լեզվի մյուս թեմաներն անցնելու ժամանակ:

Հնչյունափոխության, ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը կապվում է բառագիտության, ինչպես նաև ձևաբանության հետ: Գրավոր և բանավոր խոսքում հաճախ հանդիպում են բառակազմական բնույթի ուղղագրական և ուղղախոսական սխալներ: Ուստի բառագիտության ուսուցման ընթացքում հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի այդ հարցերին լուրջ ուշադրություն դարձնելը, հատկապես որ երեխաներին բառի ստուգաբանությունը շատ է հետաքրքրում: Դրանով ուսուցիչը կապահովի թեմայի գործնական ուսուցումը:

Բառապաշարի հարստացումն ու բառուսուցումը բառագիտությունն ուսումնասիրելու ժամանակ

Հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշչում ներկայացված են <<Հայոց լեզու>> և <<Գրականություն>> առարկաների ուսումնական ընդհանուր նպատակները. սովորողների մեջ մշակել ժամանակակից գրական հայերենին համապատասխան խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով տարբեր բնույթի տեքստեր կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողություններ: (հղում)

Հայոց լեզվի և գրականության դասավանդումը հետապնդում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնցից մեկը սովորողների բառապաշարի հարստացումն է, որը նպաստում է շրջապատող աշխարհի առարկաների և երևույթների ճանաչմանը:

Բառը լեզվի շինանյութն է: Մեզ շրջապատող աշխարհի բոլոր առարկաներն ու երևույթները, նրանց բնորոշ հատկանիշները անվանում ենք բառերի միջոցով: Հարուստ բառապաշարը զարգացած և գրագետ խոսքի առաջին նախապայմաններից մեկն է: <<Խոսի՛ր, որ քեզ տեսնեմ>>,- ասել է իմաստուններից մեկը: Յուրաքանչյուր մարդ իր իմացած բառերի միայն մի մասն է օգտագործում, ուրեմն պետք է կարողանա իր իմացածից տեղին և ճիշտ ընտրություն կատարել, որպեսզի խոսքը դառնա գեղեցիկ ու տպավորիչ: Ահա թե ինչու սովորողը պետք է ունենա բառազգացողություն, լավ իմանա բառերի իմաստներն ու իմաստային նրբերագները:

Իհարկե, բառապաշարի հարստացումը, բառերի իմաստային նրբությունները սովորելը, ճիշտ բառագործությունը չեն սկսվում և ավարտվում վեցերորդ դասարանում, որտեղ ուսուցանվում է բառագիտությունը: Այն սկսվում է ավելի վաղ և շարունակվում է մինչև դպրոցն ավարտվելը: Սա նշանակում է, որ ուսուցիչն իր ամենօրյա հետևողական ու համբերատար աշխատանքով պետք է հարստացնի աշակերտի բառապաշարը, բացահայտի բառօգտագործման գաղտնիքները և՛ հայոց լեզվի, և՛ գրականության դասերին:

Բառապաշարը խոսքի համար շինանյութ է, դեռ շենք չէ: Պետք է կարողանալ այդ շինանյութը համապատասխան մշակման ենթարկվել, ձևափոխել և ըստ լեզվի կապակցման օրինաչափությունների՝ կառույց դարձնել: Ամեն ինչ կախված է ուսուցչի կողմից աշխատանքի ճիշտ կազմակերպումից, մեթոդների ընտրությունից ու բազմազան միջոցների կիրառումից:

Անծանոթ բառը աշակերտը հեշտ կճանաչի, եթե փորձի բառակազմական վերլուծության ենթարկել, ստուգաբանել, իհարկե, հաճախ ուսուցչի օգնությամբ: Դա կնպաստի բառի ուղղագրությունը իմանալուն, իմաստը հասկանալուն և նախադասության մեջ ճիշտ գործածելուն : Այդ սկզբունքով կարելի է սովորեցնել հայերեն բառերի մեծ մասը: Օրինակ՝ *գեղջկուհի, մառախլապատ, գեղատեսիլ, հինավուրց, ունեցվածք, լուսամփոփ, յուրային, մազապուրծ, երկպառակություն, պաղպաջուն, դիակապուտ, ամպածրար, ,անշնորհք և այլն*: Իհարկե, կարևոր է բաղադրիչները ճանաչելը, բայց պետք է սովորողը կարողանա բառը նաև ճիշտ գործածել խոսքում:

Անօրեն բառը աշակերտը ճիշտ կգրի, եթե բառը բաղադրիչների բաժանի և ճանաչի օրեն արմատը: Այդ դեպքում նա այդ բառը չի շփոթի մեղմորեն բառի հետ՝ մեղմ և - որեն բաղադրիչները տեսնելով: Նույնահունչ բաղադրիչներից առաջինը օրեն արմատն է, իսկ երկրորդը՝ - որեն ածանցը:

Ապա ամրապնդելու համար կարելի է այդ բաղադրիչներով կազմել նոր բառեր՝ ներկայացնելով բառացանկը T-աձև աղյուսակով:

անօրեն	նրբորեն
տնօրեն	մեղմորեն
ապօրինի	դառնորեն

Մեկ ուրիշ օրինակ՝ ոչ միայն բառի գրությունը իմանալու, այլև իմաստը ինքնուրույն բացատրելու համար: *Խոչընդոտ* բառի բաղադրիչները(խոչ+ընդ+ոտ+ք) կօգնեն սովորողին հասկանալ բառի իմաստը, եթե նա իմանա, որ *խոչ* արմատը գրաբարում նշանակել է արգելք, իսկ *ընդ* բաղադրիչը՝ տակ, օրինակ՝ *ընդհատակյա, ընդգծել:* Բառի կազմությունը հեշտ և արագ վերլուծելու համար կարելի է կիրառել տարբեր մեթոդներ, գործնական աշխատանքներ, վարժություններ, լեզվական խաղեր: Սովորողներին շատ է աշխուժացնում <<Լուսակիր>> մեթոդը: Նրանք նախորոք պատրաստում են կարմիր, կապույտ, նարնջագույն թղթեր: Տրվում է հրահանգ. կազմությամբ պարզ բառ լսելիս աշակերտները պետք է բարձրացնեն կարմիրը, ածանցավոր բառի դեպքում՝ կապույտը, բարդ բառերի ժամանակ՝ նարնջագույնը: Իսկ եթե բառը բարդածանցավոր է, ապա ոչ մի գույն չպետք է բարձրացնեն: Այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցչին կարճ ժամանակում ամբողջական պատկերացում կազմել, թե ինչ չափով են յուրացրել թեման բոլոր սովորողները: Նաև ստեղծվում է առողջ մրցակցություն. պարտվողները դուրս են մնում խաղից և անպայման գրում, վերլուծում այն բառը, որը սխալ են գուշակել:

Բառուսուցումը լիարժեք կլինի, երբ սովորողը ոչ միայն բառի կազմությունը և իմաստը իմանա, այլև այն կարողանա ճիշտ գործածել խոսքում: Պետք է մշակվեն բառագործածության կարողություններ, բառազուգակցումներ անելու հմտություններ: Անպայման պետք է պահանջել, որ աշակերտը իր սովորած բառը գործածի նախադասության մեջ տարբեր իմաստներով, եթե բառը բազմիմաստ է: Այս տիպի աշխատանքները ակտիվացնում են աշակերտներին, զարգացնում նրանց վերլուծական կարողությունները:

Բառագիտություն անցնելիս ուսուցչի գլխավոր պարտականություններից մեկն է աշակերտներին բառարաններից օգտվել սովորեցնելը: Կարելի է օգտվել

տարբեր բառարաններից՝ բացատրական, հոմանիշների, հականիշների, դարձվածքների, ձևակազմական և այլն:

Ավելի աշխատատար է *բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի* թեման: Հոմանիշների առատությունը լեզվի հարստության, ճոխության, արտահայտչական հնարավորություններ և իմաստային նրբերանգներ արտահայտելու լավագույն միջոց է, իսկ հայերենը բավականին հարուստ է հոմանիշներով: Հոմանիշների ուսուցմանը պետք է տալ գործնական բնույթ՝ այդ ընթացքում ցույց տալով և՛ հոմանիշների հարստությունը, և՛ նրանց արտահայտչական հնարավորությունները: Սովորողները պետք է իմանան, որ հոմանիշ բառերը ոչ միշտ կարող են փոխարինել իրար: Հոմանիշների ուսուցումը հնարավորություն է տալիս սովորեցնելու բառի գործածության որոշ նրբություններ, որոնք նպաստում են խոսքի ճշգրտությանը: Այս ամենը հաշվի առնելով՝ սովորողը *ման գալ* և *գբոսնել* բառերը տեղին կօգտագործի համապատասխան ոճերում:

Հաճախ խոսողն իր անձնական վերաբերմունքն է դրսևորում հոմանիշների միջոցով, ինչպես՝ *ուտել և լափել, խմել և կոնծել, փախչել և ճողոպրել*: Սա ցույց է տալիս համապատասխան հոմանիշի ընտրության կարևորությունը ասելիքը ճշգրիտ արտահայտելու հարցում, քանի որ խոսողն առանց լրացուցիչ բացատրության արտահայտում է իր վերաբերմունքը կատարված իրողության, անձի վերաբերյալ: Սա ևս ունի գործնական արժեք, որին խիստ ուշադրություն պիտի դարձնի ուսուցիչը:

Հոմանիշների, հականիշների, համանունների ուսուցման իսկական միջոց են տարբեր բնույթի լեզվական խաղերը: (Տե՛ս Հ.Հարությունյան, <<Հետաքրքրաշարժ հայոց լեզու>>, <<Լույս>> հրատարակչություն, Երևան 1979):

Հոմանիշների ուսուցման իսկական միջոցը գրականության դասն է, երբ գրական տեքստում երեխաները փորձում են որևէ բառի փոխարեն գործածել նրա հոմանիշը, բացատրում իմաստային նրբերանգները:

Ուսուցիչը սովորողներին մատչելի օրինակներով կարող է ցույց տալ և հենց նրանց միջոցով բացատրել մի շարք հոմանիշների նրբերանգներ: Օրինակ՝ձի (ամեն տեսակի) – նժույգ (ընտիր, հեծնելի ձի), դաժան-անողոք (շատ դաժան), գույն-երանգ (գույնի տարբերակ) և այլն:

Բառապաշարի հարստացման մյուս միջոցներից մեկն էլ <u>դարձվածքների</u> իմացությունն է: Ուսուցիչը, հաշվի առնելով այն, որ դարձվածքները լեզվի

ինքնատիպությունն արտահայտող ձևեր են, պետք է ուշադրություն դարձնի դրանց: Սովորողներին պետք է սովորեցնել շատ դարձվածքներ, սովորեցնել ոչ միայն հասկանալ ու բացատրել դրանց իմաստը, այլև անհրաժեշտության դեպքում օգտագործել դրանք սեփական բանավոր ու գրավոր խոսքում: Այս աշխատանքը կատարվում է հիմնականում ընթերցանության դասերին:

Սովորողների բառապաշարը դարձվածքներով հարստացնելու ուղղությամբ կարելի է կատարել տարբեր բնույթի աշխատանքներ. աշակերտը բառատետրում պետք է գրի դարձվածքի բացատրությունը, օգտագործի ինքնուրույնաբար կազմած նախադասությունների մեջ, օգտվի դարձվածաբանական բառարաններից:

Ինչպես հարստացնել բառապաշարը գեղարվեստական երկի ուսուցման ժամանակ

Բառապաշարի հարստացման ամենաարդյունավետ միջոցը գեղարվեստական երկի լեզվաոճական, սյուժետային, գաղափարական մշակման դասերին նորածանոթ և անհասկանալի բառերի ու արտահայտությունների ուսուցումն է: Նախքան ընթերցանության դասին անցնելը ուսուցիչը պետք է բազմակողմանիորեն ծանոթանա բնագրին, ընդգծի կամ դուրս գրի բոլոր այն բառերը, դարձվածքները, արտահայտությունները, թևավոր մտքերը, որոնց բացատրությունը անհրաժեշտ կլինի տալ դասարանում:

Շատ հաճախ ուսուցիչը դրանց բացատրությունը թողնում է սովորողին՝ ինքնուրույն գտնելու բառի իմաստը, հոմանիշը, հականիշը, կիրառությունը: Խորհուրդ է տրվում սովորողին օգտվել բառարաններից կամ երբեմն էլ հենց այն նախադասությունից, որտեղ կիրառվել է բառը: Բազմաթիվ բարդ բառերի իմաստներ բխում են հենց կազմությունից: Սովորողը պետք է իմանա այս նրբությունը և հարկ եղած դեպքում գլխի ընկնի, ինքնուրույն բացատրի բառը: Սրանով վերջ կդրվի սերտողականությանը, դասագրքային բացատրությունների մեխանիկական կրկնությանը: Սովորողներից ոմանց մեջ ստեղծված է այն պատկերացումը, թե լեզուն քերականական կանոնների ամբողջություն է: Ահա թե ինչու շատերի համար լեզուն դառնում է անհետաքրքիր, դժվարըմբռնելի, չեն զգում հայոց լեզվի համն ու հոտը և հաճույքով չեն սովորում: Սա

պարտավորեցնում է ուսուցչին ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառմամբ զարգացնել սովորողի տրամաբանական մտածողությունը, յուրացումը դարձնել գիտակցական, որն էլ հիմք է գործնական հմտությունների զարգացման:

Երբեմն պատահում են այնպիսի բառեր, որոնք, առանձին վերցրած, դյուրըմբռնելի չեն, դրանց իմաստն ավելի մատչելի է դառնում կապակցության մեջ:

Օրինակ՝ *հեգ տղա, անկատար տենչեր, ստեպ-ստեպ խաչակնքել, կրակերանգ գույն, թռչունի երախ, տարաշխարհիկ հայեր, սատար կանգնել և այլն*:

Գրական երկերում հաճախ են պատահում թևավոր մտքեր, դիցաբանական բառեր,պատմական անուններ, որոնք ընդարձակում են երեխաների մտահորիզոնը, զարգացնում և բարձրացնում ընդհանուր գրագիտությունը: Օրինակ՝ *դելֆյան պատգամախոս, դամոկլյան սուր, աքիլլեսյան գարշապար, շատակեր Շարա, Արա Գեղեցիկ, գորդյան հանգույց, Պառնաս, Մորփեոսի գիրկն ընկնել, հավլունի թուր, Աքիլլես և այլն*: Գրական երկերում հանդիպող անձնանուններն ու աշխարհագրական տեղանունները նույնպես նպաստում են բառուսուցմանն ու բառապաշարի հարստացմանը: Այդ օրինակները շատ են, և ուսուցիչը պետք է սովորողի ուշադրությունը սևեռի ոչ միայն դրանց բացատրության, այլև գրության ու գործածության վրա: Օրինակ՝ *Ասորիք, Բաբելոն, Ռոքնաբադ, Մեքքա, Սաադի, Ռավեննա, Վենետիկ, Ռիալտո ,Դանտե Ալիգերի, Ջավախք, Ֆիրդուսի, Թմուկ բերդ, Ռաֆայել Սանտի, Անտոն Չեխով, Լև Տոլստոյ, Չարլզ Դիկենս, Գի դը Մոպասան, Հոմերոս և այլն:*

Գեղարվեստական երկի ուսումնասիրման ժամանակ հարկավոր է խիստ ուշադրություն դարձնել խոսքի արտահայտչական միջոցներին. սովորողը պետք է կարողանա մեկնաբանել ստեղծագործության լեզվաոճական և պատկերային համակարգի առանձնահատկությունները: Գեղարվեստական արձակ և չափածո տեքստերի լեզվաոճական վերլուծությունը կապահովի սովորողների լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացումը: Այդ աշխատանքը նրանք հիմնականում կկատարեն ինքնուրույն՝ կորոնեն, կպրպտեն՝ առանձնացնելով մակդիրները, փոխաբերությունները, համեմատությունները և այլն: Օրինակները շատ են ու բազմազան:

- Անտառի և այգու վրա խշշալով աշուն էր իջնում: (Հ.Մաթևոսյան,<<Հացը>>)

- Հեքիաթդ անվերջ օրորում, Իլիկդ խոսում է անուշ: (Վ.Տերյան,<<Կարծես թե դարձել եմ ես տուն>>)
- Անձրևի նվագը հարազատ է ինձ հոգեպարար երաժշտության նման: (Վ. Անանյան, <<Անձրև>>)
- Նա անցել էր գավառից գավառ, հավաքել մեռնող, գաղթող ու ննջող երգերը>> (Մ.Գալշոյան, <<Կռունկ>>)

Նմանօրինակ աշխատանքները նպաստում են ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողունակությունների մշակմանը, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտությունների ձևավորմանը:

Ուսուցչի խնդիրն է սովորողներին զգալ տալ գեղարվեստական խոսքի հմայքը, նրա պատկերավորման հնարքների ու արտահայտչամիջոցների բազմազանությունը:

Գրականության դասերին ընթերցանության միջոցով մշակվում է խոսքի արտահայտչականությունը, զարգանում է գեղեցիկ խոսքի ճաշակ: Գրական երկի հուզական ընկալումը այն հիմքն է, որի վրա ծավալվում է դատողական վերլուծությունը: Մեր դասականների օգտագործած գեղեցիկ բառերի, դարձվածքների յուրացումը սովորողների կողմից այն ուղին է, որ ապահովում է նրանց խոսքի գեղեցկությունը, բառապաշարի հարստությունը և նրանց մեջ առաջացնում մայրենիի հանդեպ սեր ու նրա ճոխ գանձերին տիրապետելու ձգտում:

Բառապաշարի հարստացումը գրավոր խոսքի ուսուցման միջոցով

Ինչպես հայտնի է, մայրենիի նպատակը սովորողներին ճիշտ և գեղեցիկ խոսք կառուցել սովորեցնելն է՝ նրանց մեջ դաստիարակելով նաև հայրենասիրության, մարդասիրության և գեղեցիկի վեհ գաղափարներ:

Գրագետ և գեղեցիկ խոսքի ձևավորմանը նպաստում են նաև գրավոր աշխատանքները՝ իրենց բազմազան ձևերով և տեսակներով: Գրավոր խոսքի ժամանակ ուսուցիչը ունի մի շարք նպատակներ՝

- ուշադրություն դարձնել բառակազմական, լեզվաոճական վերլուծություններին
- ընդլայնել ու հարստացնել սովորողների բառապաշարը
- մշակել կապակցված խոսք կառուցելու հմտություններ
- մշակել սեփական մտքերը տրամաբանական հաջորդականությամբ, լեզվական ու քերականական տեսակետից ճիշտ ու անսխալ գրելու բավարար հմտություններ ու կարողունակություններ:

Սկսած առաջին դասարանից՝ գրաճանաչության ուսուցմանը զուգընթաց աշակերտները սովորում են գրավոր արտահայտել իրենց մտքերը: Դասարանից դասարան այդ աշխատանքը աստիճանաբար ընդլայնվում է, մշակվում ու կատարելագործվում թե՛ իր բովանդակությամբ ու թեմատիկ բազմազանությամբ, թե՛ իր կառուցվածքով ու ծավալով:

Բազմազան են գրավոր խոսքի զարգացման ճանապարհները. գրել թելադրություն, փոխադրել լսած տեքստը, վերարտադրել կարդացած նյութը կամ նկարի բովանդակությունը, նկարագրել կամ բնութագրել գրական հերոսին, ինքնուրույն կազմել բնագրի վերաբերյալ հարցեր կամ պլան, գրել գործնական գրություններ և այլն:

Ոսկեղենիկ մեր մայրենին,որ գալիս է դարերի խորքից և աշխարհի հնագույն լեզուներից է, քայլ առ քայլ զարգացել ու ճոխացել է: Հայոց լեզուն <<ոսկեղենիկ>> են կոչում հենց նրա հարստության ու գեղեցկության համար:

<<Ճոխ է հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնաիրի այն: Ես փորձում եմ, և իմ փորձն առաջ է ընթանում>>,- ասել է անգլիացի մեծ բանաստեղծ Ջ.Բայրոնը:

Իսկապես, հայոց լեզուն ունի մի շարք ընդհանուր հատկություններ՝ պարզություն, մաքրություն, հստակություն, ճկունություն, դյուրահնչություն, համառոտություն:

Հիշենք Ե.Չարենցի խոսքերը.

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,

Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին

Պայծառ է նա՝ որպես մշտաբորբոք փարոս,

Վառված հրով անշեջ դարերում հին…

Ցանկացած բնագավառի ամենաբարդ միտքն անգամ կարելի է այս լեզվով հեշտությամբ ձևակերպել: Միտքը ճիշտ, մանավանդ գեղեցիկ արտահայտելու համար անհրաժեշտ է խոսքը կառուցել լեզվի՝ գոյություն ունեցող շարահյուսական, ոճական կանոններին համապատասխան: Սա առավել ևս վերաբերում է գրավոր խոսքին, քանզի այստեղ մտքի աղքատությունը, լեզվական սխալներն ավելի ակնառու են:

Նաիրի Զարյան <<Հայոց լեզուն>> բանաստեղծությունը ուսուցանելիս մայրենիի ուսուցիչը աշակերտների ուշադրությունը սևեռում է հատկապես այն տողերի վրա, որ մենք պետք է <<փայլեցնենք թրի նման, որ զրնգա արևի տակ հավետ պայծառ հայոց լեզուն>>:

Գրավոր խոսքի նպատակային ուսուցումն էլ ունի իր ձևերն ու մեթոդները, և դրանց գործադրման ամբողջությունն ու հետևողական աշխատանքը միայն կնպաստեն սովորողների գրավոր խոսքի զարգացմանը: Թվում է, թե գրավորի առանձին տեսակները իրար հետ որևէ կապ չունեն, դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, բնորոշ հատկանիշները, ուսուցման յուրահատուկ ձևերն ու մեթոդները: Բայց երբ խոսքը վերաբերում է գրավոր աշխատանքների ուսուցման ընդհանուր համակարգին, ապա գրավորներից յուրաքանչյուրի կապը մյուսի հետ դառնում է ավելի սերտ, գրավորի մի տեսակը նախապատրաստում է մյուսը, փոխհաջորդում և հերթագայում նրան՝ այն էլ մեթոդական որոշակի սկզբունքներով ու կանոններով՝ աստիճանական բարդացմամբ՝ մեկը մյուսին լրացնելով ու ամբողջացնելով:

Ամբողջական համակարգի ստեղծման համար կարևոր նշանակություն ունեն տարբեր դասարաններում տրվող գրավոր աշխատանքների կապն ու աստիճանական անցումը: Այսպես, տարրական դասարաններում ձեռք բերած գրավոր խոսքի հմտությունները խորացվում և կատարելագործվում են միջին դպրոցում, և այսպես շարունակ: Անհրաժեշտ է լավագույն ձևով նախապատրաստել գրավոր աշխատանքը՝ հաշվի առնելով ծրագրով նախատեսված նյութը, իսկ գրավոր աշխատանքն անցկացնելուց հետո հանգամանորեն վերլուծել սխալները, հետևողական աշխատանքի միջոցով մշակել, հարստացնել և կատարելագործել այն:

Դպրոցում կիրառվող գրավոր աշխատանքների տարբեր տեսակները ժամանակի ընթացքում անընդհատ փոփոխվում են, կատարելագործվում, ըստ ժամանակի պահանջի՝ առավելությունը տրվում է ուսուցման այս կամ այն ձևին: Ներկայումս գերիշխողը թեստային աշխատանքն է, քանի որ տարեվերջյան

ավարտական քննություններին սովորողները հանձնում են գրավոր թեստ: Բայց ընթացիկ գրավոր աշխատանքները չեն սահմանափակվում թեստով, քանի որ միայն բազմաբնույթ և բազմաբովանդակ գրավոր խոսքի միջոցով սովորողը կկարողանա արտահայտել ազատ և ինքնուրույն, գրագետ և գեղեցիկ խոսք:

Գրագետ խոսքի զարգացմանը հատկապես նպաստում են թելադրությունները, որոնք օգնում են ուսուցչին հեշտ բացահայտել սովորողի ուղղագրական, բառակազմական և կետադրական գիտելիքները: Իսկ եթե ուսուցիչը ցուցաբերի ստեղծագործական մոտեցում, կարող է հենց թելադրության միջոցով զարգացնել բառապաշարի հարստացման և բառուսուցման այլ հմտություններ ևս, քանի որ միայն անսխալ և վարժ գրելը դեռևս լեզվական լիարժեք գիտելիք չի նշանակում: Թելադրությունից հետո կարելի է տալ և՝ ստեղծագործական միտքը զարգացնելու, և՝ քերականական գիտելիքները ստուգելու նպատակով առաջադրանքներ:

Օրինակ՝ թելադրության բնագրից հետո կարելի է առաջադրել գրել երեք պարզ ընդարձակ նախադասություն՝ որպես եզրափակիչ խոսք կամ շարունակություն:

Խոսքի զարգացման առանձնահատուկ ձևեր են շարադրությունները և փոխադրությունները: Դրանք նպաստում են սովորողների ստեղծագործական և վերլուծական կարողունակությունների զարգացմանը, կապակցված շարադրանք ստեղծելու կարողությունների մշակմանը: Բայց պետք է նշենք, որ գրավոր աշխատանքի այս տեսակները կիրառելիս ուսուցիչը ունենում է բազմաթիվ մտահոգություններ. ինքնուրույն, գեղեցիկ, ստեղծագործական ու լեզվական ճիշտ բանաձևումների կողքին հաճախ ենք հանդիպում մտքի աղքատությամբ և լեզվաոճական ու քերականական սխալներով աչք ծակող աշխատանքների:

Երբ, անկախ սովորողի կարողություններից, տրվում է ազատ կամ վերլուծական թեմայով շարադրություն, նա ստիպված դիմում է այս կամ այն պատրաստի աղբյուրի, կարող և ունակ ընկերների, համացանցի, արտագրում և այդ ամենը համարում սեփական ստեղծագործություն: Այդպիսի աշխատանքներն ընթերցելիս անմիջապես զգացվում է միևնույն կաղապարը, շարադրանքի նույն սկիզբը, միևնույն ընթացքն ու ավարտը: Իհարկե, սովորելու ընթացքում ուսուցիչը միշտ խրախուսում է, խորհուրդ է տալիս սովորողներին օգտվել տարբեր բնույթի գրավոր աղբյուրներից՝ բառարան, տեղեկատուներ, համացանց, հանրագիտարան և այլն, բայց պետք է զարգացնել դրանցից ճիշտ օգտվելու, անհրաժեշտ նյութերը ձեռք բերելու և նպատակադրված կիրառելու

հմտություններ:

Ինքնանպատակ չպետք է լինի նաև փոխադրության ուսուցումը: Այսօր դասական ձևով փոխադրությունների անցկացումը բոլորովին չի նպաստում սովորողների ինքնագործունեության և տրամաբանական մտածողության զարգացմանը, մայրենի լեզվից և գրականությունից ձեռք բերած տեսական գիտելիքների ամրակայմանը և գործնական կիրառությանը: Սովորողների ստեղծագործական ակտիվությունն ու ձեռներեցությունը բարձրացնելու, բառապաշարը ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է վերանայել փոխադրության անցկացման ավանդական մեթոդներն ու ձևերը, փոխադրություն գրել ավելի շատ լեզվական-քերականական հանձնարարություններով, փոխակերպումներով, համառոտելով կամ ընդարձակելով:

Փոխադրություններում հաճախ գերիշխում է պարզ վերարտադրությունը, հազվադեպ են ստեղծագործական, դատողական տարրերը: Ուսուցիչը պետք է հասնի նրան, որ փոխադրության ավարտին սովորողը կարողանա երևույթը, այս կամ այն հերոսի վարքագիծը, գործունեությունը գնահատող ու արժևորող եզրակացություններ անի, գրի ինքնուրույն եզրափակիչ մտքեր ու դատողություններ:

Լեզվի գործնական ուսուցման պահանջը գրավոր խոսքում բավարարելու համար ուսուցիչը իր աշխատանքը այնպես պետք է կազմակերպի, որ գիտելիքների յուրացումը լինի գիտակցական, սովորած գիտելիքները դառնան գործնական կարողություններ:

Այսօր սովորողների գրավոր խոսքում ակնհայտ են բառագիտական, բառակազմական, շարադասական սխալներ՝ բառի ոչ տեղին գործածություն, հոմանիշների կուտակումներ, ենթակայի և ստորոգյալի անհամաձայնություն, բայի կազմության, ժամանակների, դիմավոր և անդեմ ձևերի կապակցման անճշտություններ, կապերի և կապական բառերի ոչ ճիշտ խնդրառություն և կրկնակի գործածություն, տրամաբանական զանազան սխալներ:

Այսպիսով, գրավոր խոսքի միջոցով բառապաշարի հարստացումն ապահովելու համար ուսուցչից պահանջվում է հետևողական աշխատանք. լավագույն ձևով նախապատրաստվել, ստեղծել խոսքային անհրաժեշտ միջավայր, ապահովել բանավոր և գրավոր խոսքի փոխկապակցումը, լեզվի և գրականության սերտ կապը, հանգամանորեն և նպատակային ձևով վերլուծել սովորողների խոսքը, գրավոր աշխատանքների թեման համապատասխանեցնել այսօրվա կյանքի պահանջներին, հաշվի առնել սովորողների տարիքային

առանձնահատկություններն ու ընդունակությունները: Միօրինակությունից խուսափելու համար ուսուցիչը պիտի փորձի և մշակի գրավոր աշխատանքներն ընդլայնելու բազմազան մեթոդներ ու հնարներ, որոնք էլ կնպաստեն սովորողների խոսքը կուռ և ամբողջական դարձնելու, սեփական մտքերը հարուստ բառապաշարով, գեղեցիկ պատկերներով արտահայտելու կարողությունների ու հմտությունների մշակմանը, արժեքային բարձր համակարգի ու ճիշտ դիրքորոշման ձևավորմանը:

Եզրակացություն

Սույն հետազոտությունը կատարելուց հետո հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

- ուսուցչի խնդիրն է համաչափորեն զարգացնել սովորողների թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքը՝ իհարկե շեշտը դնելով հիմնականում բանավորի վրա, որի թերությունները գրավորի համեմատ զգալի են
- լուրջ ուշադրություն պետք է դարձնել բանավոր խոսքին ներկայացվող պահանջներին, որոնց պահպանումը և գործադրումը բարերար հող կստեղծի սովորողների կապակցված խոսքի զարգացման համար
- խոսքի բովանդակություն, բազմազանություն, պարզություն և հստակություն, տրամաբանական կապակցվածություն, արտահայտչականություն ապահովելու համար ահրաժեշտ է ուշադրությունը սևեռել բառապաշարի հարստացման և բառուսուցման աշխատանքների ճիշտ կազմակերպմանը, ուղղագրական, ուղղախոսական և քերականական կանոնների պահպանմանը
- ամենօրյա աշխատանքով աստիճանաբար ընդլայնել սովորողների բառապաշարը, մշակել նրանց մեջ ինչպես սեփական, այնպես էլ ուրիշների մտքերը ճիշտ և հարուստ բառապաշարով հաղորդելու կամ վերարտադրելու կայուն հմտություններ:
- գործուն բառապաշարի հարստացման արդյունավետությունը բարձրացնելու համար շեշտը դնել ավելի հաճախ գործածվող բառերի վրա, որոնք տվյալ տարիքի սովորողի հոգուն ու ըմբռնողությանը մատչելի են, բառերի ընտրությունը կատարել մտածված ու խելացիորեն՝ հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունների շրջանակը և արդիական պահանջները:

Այսպիսով, ուսուցչի խնդիրն է իր ամենօրյա գործունեությամբ զարգացնել սովորողի իմացական հետաքրքրությունը, դաստիարակել ուշադրություն յուրաքանչյուր նոր հանդիպած բառի նկատմամբ, սիրել տալ բառը, սովորեցնել նկատել անծանոթ բառը, բացահայտել բառի կենսագրությունը սեփական նախաձեռնությամբ:

Գրականության ցանկ

1. Հ.Ա.Հարությունյան, Լեզվի գործնական ուսուցումը և տրամաբանական մտածողության զարգացումը, <<Լույս>> հրատարակչություն, Երևան, 1984թ.
2. Վ.Գ.Ավագյան, Բառագիտության ուսուցումը դպրոցում, Երևան, <<Լույս>>, 1989 թ.
3. Յ.Ավետիսյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևանի պետական համալսարան, Երևան, 2014 թ.
4. Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2022 թ.
5. Պ.Ս.Բեդիրյան, Մայրենիի ուսուցման հարցեր, <<Լույս>> հրատարակչություն, Երևան, 1982թ.
6. Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, <<ԷԴԻԹ ՊՐԻՆՏ>> հրատարակչություն, Երևան 2012